

**V.ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ,  
ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀՀ ԱՎԾ-ն շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ, նրանցից ստացել տեխնիկական, ֆինանսական, խորհրդատվական և աշխատանքային օգնություն:

2009 թվականի ընթացքում ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվել են աշխատանքներ հետևյալ նախագծերի շրջանակներում.

1. Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ՏԱՄԻՍ ծրագրի «Վիճակագրություն 10» պայմանագրի շրջանակում.

- բիզնես ռեգիստր,
- աշխատանքի վիճակագրություն,
- շինարարության վիճակագրություն,
- ազգային հաշիվներ,
- սարքավորումների ձեռք բերում.

2. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համատեղ.

Բարձրացնել գործընկեր պետական մարմինների կարողությունները ազգային և մարզային մակարդակով «ԱրմենիաԻնֆո»-ի մեկնարկային գործարկման հարցում՝ Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) և Կայուն զարգացման ծրագրի (ԿԶԾ) գծով արձանագրած առաջընթացը մշտադիտարկելու և լուսաբանելու նպատակով:

3. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ.

- 2009 թ. «ՄՈՆԵԿ» ծրագիր.

4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Պարենի համաաշխարհային ծրագրի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համատեղ.

Տնային տնտեսությունների հետազոտություն՝ օժանդակելու Հայաստանում ֆինանսական ճգնաժամի ազդեցությանն արձագանքելու Կառավարության որոշումների ընդունմանը.

5.«Հայաստանի Հանրապետության և միջազգային զարգացման ընկերակցության միջև» Վիճակագրական գլխավոր ծրագրի մշակումն ու տեխնիկական աջակցություն վիճակագրական կարողությունների նպատակով TF091206 TFSCB դրամաշնորհի համաձայնագիր,

6.Համաաշխարհային Բանկի, ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ԾԻԳ» պետական հիմնարկի հետ համատեղ («Առողջապահական համակարգի արդիականացում» IDA թիվ 4267 AM (APL2) ֆինանսական համաձայնագիր).

-«Առողջապահական կազմակերպությունների և դեղատների ֆինանսական գործունեության և տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի ընտրանքային հետազոտություն»,

-«Առողջապահական ոլորտի գործունեությունը գնահատելու նպատակով տնային տնտեսություններում զանգվածային հետազոտություն»:

7.«Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի և ՀՀ ԱՎԾ միջև ստորագրված պայմանագրի շրջանակում.

- «Կենսասնակարգակի ամբողջացված հետազոտություն» ենթաժողովրդի.

8.Շվեդական միջազգային համագործակցության զարգացման գործակալության ֆինանսավորմամբ Շվեդիայի վիճակագրական ծառայության հետ համագործակցությամբ «Սոցիալական վիճակագրությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում.

1. Հաշմանդամների կենսապայմանների վիճակագրություն,
2. Շրջակա միջավայրի վիճակագրություն,
3. Գյուղացիական տնտեսությունների ռեգիստր,
4. Ժամանակի օգտագործման հետազոտություն,
5. Սարքավորումների ձեռքբերում:

9. Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն – Պարենի ապահովման ծրագիր.

10. Ասիական զարգացման բանկ. տարածաշրջանային տեխնիկական օգնության ցուցաբերում. «Ոչ ֆորմալ հատվածի գնահատում».

11. Աշխատանքի միջազգային կազմակերպություն - Աշխատանքային միգրացիայի ընտրանքային հետազոտություն:

2009 թվականին ՀՀ ԱՎԾ-ն մասնակցել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) ՀԶՆ-ի հետ կապված աշխատանքներին՝ արդիականացնելով ՀՀ ԱՎԾ կայքում գետեղված «Հայաստանի ՀԶՆ ցուցանիշները» խորագրով էջը:

2009թ. ՀՀ ԱՎԾ 38 աշխատակից 19 արտասահմանյան երկրում (Սերբիա, Բելգիա, ԱՄՆ, Ֆրանսիա, Գրոգատանի Հանրապետություն, Վրաստան, Շվեդիա, Նորվեգիա, Շվեյցարիա, Լատվիա, Ուկրաինա, Լյուքսեմբուրգ, Ավստրիա, Սենեգալ, Հունաստան, Սլովենիա, Հունգարիա, Ղազախստան, Թաիլանդ) վերապատրաստվել և մասնակցել են տարբեր միջոցառումների հետևյալ թեմաներով՝ ազգային վիճակագրական գլխավոր ծրագրի մշակում, նոր տեխնիկա և տեխնոլոգիաներ վիճակագրության համար, ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 40-րդ նստաշրջան, «Մահացությունը և դրա պատճառները Կովկասյան երկրներում» ծրագրի շրջանակում Հայաստանի մահացության ցուցանիշների մասով ուսումնասիրում, տեղեկատվական և համեմատական վերլուծությունների պատրաստում, մանկական աղքատության համաշխարհային ուսումնասիրություն, պաշտոնական վիճակագրության բարեփոխումները Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում, գյուղացիական տնտեսությունների ռեգիստր, վիճակագրական տեղեկատվական համակարգերի կառավարում, միջազգային իրավունք և իրավագիտություն, էներգետիկայի վիճակագրություն, շրջակա միջավայրի ցուցանիշներ, շրջակա միջավայրի վերահսկում և գնահատում, առողջությունը, հիվանդացությունը և մահացությունը 21-րդ դարում. նոր ժամանակաշրջան, գլոբալ գնահատման գծով ռազմավարական կառավարում, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի արևելյան տարածաշրջանի բիզնես ռեգիստրները և դրանց դերը բիզնես վիճակագրությունում, բիզնես ռեգիստրներ, վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի վիճակագրություն, վիճակագրության զարգացում՝ ընկերակցության նորացում, տնային տնտեսությունների հետազոտության տվյալների վերլուծություն, դրամական փոխանցումների վիճակագրություն, 2010 թ. գյուղատնտեսական համատարած հաշվառումների ծրագիր, Հազարամյակի զարգացման նպատակների

ցուցանիշների և վիճակագրական տեղեկատվության տարածում, ոչ ֆորմալ հատվածի և ոչ ֆորմալ գրադավածության գնահատում, Ասիայում և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում տնտեսական վիճակագրության կատարելագործման համար տարածաշրջանային ծրագրի մշակում:

Նշված միջոցառումների համար նախապատրաստվել և հրապարակվել է 10 գեկույց՝ 223 էջ ընդհանուր ծավալով:

2009 թվականին ՀՀ ԱՎԾ 270 աշխատակից միջազգային համագործակցության շրջանակում մասնակցել է ՀՀ տարածքում /Երևան, Ծաղկաձոր, Աղվերան/ կազմակերպված թվով 72 միջոցառումների /աշխատանքային հանդիպումներ, շնորհանդեսներ, քննարկումներ, սեմինարներ, նիստեր, աշխատաժողովներ, ուսուցման դասընթացներ, խորհրդակցություններ, կլոր սեղան-քննարկումներ, կոնֆերանսներ, ֆորումներ/:

2009 թվականին ՀՀ ԱՎԾ է այցելել 9 հանձնախումբ, 23 փորձագետ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովից, Եվրամիության վիճակագրական ծառայությունից (Եվրոստատ), Ազատ առևտրի եվրոպական կազմակերպությունից՝ Նորվեգիայի վիճակագրական ծառայությունից, Շվեդիայի վիճակագրական ծառայությունից, Ասիական զարգացման բանկից, Միավորված ազգերի կազմակերպության Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովից՝ պաշտոնական վիճակագրության ազգային համակարգի գրքալ գնահատումն իրականացնելու, ինչպես նաև հաշմանդամների կենսապայմանների վիճակագրության, ժամանակի օգտագործման վիճակագրության, շրջակա միջավայրի վիճակագրության, գյուղացիական տնտեսությունների ռեգիստրների, աշխատանքի վիճակագրության, ազգային հաշիվների, բիզնես ռեգիստրի, ոչ ֆորմալ հատվածի գնահատման, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառներում տեխնիկական և խորհրդատվական օգնություն ցուցաբերելու նպատակով:

Բոլոր այցելություններն արդյունավետ էին և դրական ազդեցություն գործեցին ՀՀ ԱՎԾ աշխատանքների հետագա բարելավման և զարգացման վրա:

2009 թվականին ՀՀ ԱՎԾ-ում կազմակերպվել է 8 սեմինար-շնորհանդես՝ նվիրված վիճակագրության տարբեր բնագավառներին, ՀՀ ԱՎԾ այցելված միջազգային փորձագետների մասնակցությամբ, ինչպես նաև արդի վիճակագրական գործիքակազմի կիրառման և ստացված ժամանակակից վիճակագրական գրականության շնորհանդեսներ, որոնց՝ ՀՀ ԱՎԾ աշխատակիցների կողմից այցեմասնակցությունների թիվը կազմել է 235 միավոր:

ՀՀ ԱՎԾ-ն Եվրոպական հարևանության ծրագրի շրջանակում՝ «ԵՄ ստանդարտներին համապատասխանող վիճակագրական մեթոդների ընդունում և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության արդիականացում» ներքո. հիմնվելով ԵՄ փորձագետների կողմից Հայաստանի վիճակագրական համակարգի ընդհանուր գնահատման վրա, վիճակագրական համապատասխան ոլորտներում եվրոպական ստանդարտներին համապատասխանելու նպատակով կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարության մշակման և իրականացման, բիզնես ռեգիստրի որակի և ընդգրկման բարելավման, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ուղեցույցների համաձայն գյուղատնտեսության համատարած հաշվառման նախապատրաստման և իրականացման. ԵՀԶ-ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թթ. միջոցառումների ներքո իրականացրել է աշխատանքներ վիճակագրական դասակարգումների ներդրման

(«Վիճակագրության համար տարածքային միավորների դասակարգման (ՆԱԹՄ)», ՆԷՅՍ վեր. 2), տվյալների պահպանման և վիճակագրական գաղտնիության վերաբերյալ կանոնակարգերի ներդրման ուղղությամբ:

ԹԱՅԵԶՍ գործիքի ներքո՝ մշակվել են առաջարկներ գյուղատնտեսության համատարած հաշվառման, ձկնորսության և ձկնաբուծության ոլորտի վիճակագրության, տնային տնտեսությունների կենսապայմանների հետազոտության՝ թվով 3, տրանսպորտի վիճակագրության, էներգետիկայի վիճակագրության, շինարարության վիճակագրության, հյուրանոցների և ռեստորանների ծառայությունների ոլորտի, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների վիճակագրության, ֆինանսական հաշվի՝ թվով 2, վիճակագրական դասակարգումների և տնտեսական գործունեության տեսակների դասակարգման թեմաներով: Նշյալ առաջարկներից ծառայությունների վիճակագրության (հյուրանոցների և ռեստորանների ծառայությունների ոլորտի) և վիճակագրական դասակարգումների և տնտեսական գործունեության տեսակների դասակարգման վերաբերյալ Երևանում սեմինարներ անցկացնելու նպատակով իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ:

ԹՎԻՆԻՆԳ գործիքի ներքո մշակվել և հաստատվել է «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում» խորագրով ծրագրի (որակի կառավարման, գների ինդեքսների, ազգային հաշիվների համակարգի, բիզնես-վիճակագրության կատարելագործման, գյուղատնտեսության համատարած հաշվառման, տեղեկատվական հանրության վիճակագրության և էներգետիկ հաշվեկշռի կազմման) տեխնիկական առաջադրանքը:

ԹՎԻՆԻՆԳ գործիքի ներքո մշակվել և ներկայացվել են հետևյալ ծրագրային առաջարկները.

1. «Սոցիալական և ժողովրդագրական վիճակագրություն» խորագրով ծրագրի շրջանակում բնակչության և ժողովրդագրության, աշխատանքի շուկայի վիճակագրության, աղքատության վիճակագրության, գիտության և տեխնիկայի վիճակագրության վերաբերյալ,

2. «Շրջակա միջավայրի վիճակագրության/Շրջակա միջավայրի սատելիտային հաշիվներ»,

3. «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ» խորագրով ծրագրի շրջանակում տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման, մշակման, պահպանման և տարածման ինտեգրացված վիճակագրական տեղեկատվական համակարգի ստեղծման վերաբերյալ:

Իրականացվել են բանակցություններ և քննարկումներ Իտալիայի, Բուլղարիայի, Սերբիայի Հանրապետության, Ավստրիայի, Նիդեռլանդների, Ֆինլանդիայի, Գերմանիայի, Շվեդիայի ազգային վիճակագրական ծառայությունների, Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրության բաժնի, ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի վիճակագրության բաժնի, Ասիական զարգացման բանկի, «21-րդ դարաշրջանում վիճակագրության զարգացման ընկերակցության» կոնսորցիումի համագործակցության զարգացման տնօրինության, Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման նախարարության (ԴիԷֆԱյԴի) ներկայացուցիչների հետ հետագա համագործակցության նախագծերի և հնարավորությունների շուրջ, ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան

տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի տնօրենի հետ՝ ուսումնական դասընթացների կազմակերպման հնարավորությունների վերաբերյալ, Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) փորձագետների հետ՝ «վիճակագրական օրենսդրություն», «վիճակագրական տեղեկատվության տարածում», «վիճակագրական համակարգերի կառավարում» և «ռեգիոնալ ստորաբաժանումների միջև համագործակցության հաստատում և ամրապնդում» թեմաներով հետագա համագործակցության հնարավորությունների, ինչպես նաև Կովկասյան տարածաշրջանում ԵՄ հետագա աջակցության ծրագրերի և միջազգային համագործակցության հեռանկարների, երեք երկրների վիճակագրական ծառայությունների միջև շարունակական համագործակցության հնարավորությունների, համատեղ աշխատանքային խմբերի ստեղծման, լավագույն փորձի փոխանակման նպատակով ընդհանուր ուսուցողական ծրագրերին մասնակցության հնարավորությունների, տարածաշրջանային ԹԱՅԵԶՍ և ԹՎԻՆԻՆԳ գործիքների շրջանակում սեմինարների, ուսուցողական այցերի, ուսումնական ծրագրերի իրականացման հնարավորությունների վերաբերյալ:

2009 թվականին լրամշակվել են «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության և Իրանի վիճակագրական կենտրոնի միջև համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագրի նախագծի հայերեն և անգլերեն տարբերակները:

2009 թվականին ՀՀ ԱՎԾ-ն իրականացրել է Եվրոստատի «Վիճակագրության և դրա հետ կապված տեղեկատվության հավաքագրում, հիմնավորում և հրապարակում թեկնածու երկրներից, պոտենցիալ թեկնածու երկրներից և Եվրոպական հարևանության քաղաքականության երկրներից» խորագրով նախագիծը:

ՀՀ ԱՎԾ-ն միջազգային համագործակցությունը տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ իրականացրել է նաև վիճակագրական տեղեկատվության ընդլայնված փոխանակությամբ և թղթակցության վարմամբ /թվով 967/: Ստացվել են բազմաթիվ տարեգրքեր, տեղեկագրեր, տեղեկատուներ, մեթոդաբանական ձեռնարկներ, հարցաթերթեր և այլ վիճակագրական նյութեր:

2009 թվականի ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում ՀՀ ԱՎԾ կողմից լույս է ընծայվել 6 հրապարակում, 1 մամուլի հաղորդագրություն, էլեկտրոնային փոստով պատասխանվել է 220 հարցումների: 2009 թվականի ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում տեղի են ունեցել 146 պաշտոնական հանդիպումներ, որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Տեղեկատվության միջպետական փոխանակման շրջանակում 2009 թվականի ընթացքում ՀՀ ԱՎԾ կողմից լրացվել և նախատեսված պարբերականությամբ ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին տրամադրվել են 193 վիճակագրական հարցաթերթեր, որոնցից՝ 32-ը՝ ամսական, 35-ը՝ եռամսյակային և 125-ը՝ տարեկան պարբերականությամբ: Ընդ որում, բոլոր հարցաթերթերը նախատեսված է եղել ներկայացնել էլեկտրոնային տարբերակով: